

Մկրտիչ Դ. Դանիելյան
Պատմ. գիտ. թեկնածու

1880–1890–ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՅ ՆԱՐՈՒՆԻԿՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ–ՆԱՐՈՒՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաս առաջին: Նորահայտ վավերագրեր «Հայրենասերների Միության» գործունեության մասին*

Բանալի բառեր – հայ նարողնիկներ, ազգային–նարողնիկական կազմակերպություն, Ոստիկանության Դեպարտամենտ, «Հայրենասերների Միություն», ՀՅ Դաշնակցություն, արխիվային վավերագրեր, Կարապետ Տեր–Խաչատրյան, թռուցիկ, նամակ–հոդված, Դավիթ Ներսիսյան, Թամարա Ադամյան:

Ռուս հեղափոխական նարողնիկության 1870–1880–ականների հերոսական ու զոհառատ պայքարն ընդդեմ ցարական բռնակալության՝ ժողովրդի ազատագրության գործին անմնացորդ նվիրումի վառ օրինակ ու միաժամանակ՝ քաղաքական փորձի կուտակման դարբնոց էր արևելահայ երիտասարդության լավագույն ներկայացուցիչների համար:

Արևելահայ իրականության մեջ այդ գործընթացը սկզբում դրսևորվեց նարողնիկական շարժմանն անմիջական մասնակցության, իսկ հետագայում՝ նրա համամարդկային նպատակներն ու պայքարի հեղափոխական մեթոդները հարազատ ժողովրդի ազատագրության գործին ծառայեցնելու տեսքով: Ռուս հեղափոխական նարողնիկության քաղաքական նպատակներից հայ ազգային–ազատագրական շարժման խնդիրներին անցնելու բեկումնային պահին արևելահայ երիտասարդության լավագույն ներկայացուցիչները հիմնեցին «Հայրենասերների Միություն» կազմակերպությունը: Մինչև կուսակցական շրջանի հայ իրականության մեջ ստեղծված այդ առաջին ու փաստորեն միակ նշանակալի ազգային–նարողնիկական կազմակերպությունը հայ ժողովրդի ազգային ու համամարդկային նպատակները համարելու միջոցով դարձավ Արևմտյան Հայաստանի ազատագրությանն ուղղված գործնական քայլերի սկզբնավորողը: Դրանով «Հայրենասերների Միությունը» **սաղմնային վիճակում** մարմնավորեց քիչ անց արևելահայ իրակա-

Ժ (ԺԶ) քառի. թիվ 3 (63), հայխա–սեպտեմբեր, 2018
ՎԿՎ համահայկական հանդես

*Ընդունվել է տպագրության 06.08.2018:

նության մեջ ձևավորված ազգային կուսակցությունների ու մանավանդ ՀՅ Դաշնակցության գաղափարախոսության ու գործելակերպի հիմնական առանձնահատկությունները¹:

Դա է պատճառը, որ հայ ազատամարտի պատմությունն ուսումնասիրողները հատուկ ուշադրություն են դարձրել «Հայրենասերների Միության» գործունեության վերաբերյալ պահպանված սահմանափակ թվով վավերագրերի հետազոտությանը: Սակայն քանի որ 1882 թ. Մոսկվայում հիմնված, իսկ քիչ անց՝ Թիֆլիսի հայ ազգային-նարողնիկական խմբակի հետ միավորված այդ կազմակերպությունն աչքի է ընկել ընդհատակյա կառույցներին բնորոշ՝ գաղտնապահ գործելակերպով, նրա պատմության վավերագրերի մեծ մասն այդպես էլ անհայտ է մնացել գիտական հանրության համար: Այս բացը մասամբ է միայն լրացվել «Հայրենասերների Միության» մի շարք անդամների հուշերի և այլ վավերագրերի հրատարակման միջոցով, ուստի անգամ ակադեմիական հրատարակություններում տեղ են գտել բազմաթիվ սխալներ ու անճշտություններ: Դրա հիմնական պատճառներից մեկը «Հայրենասերների Միության» գործունեությանն ուշադրությամբ հետևած ցարական Ոստիկանության Դեպարտամենտի ու նրա տեղական բաժանմունքների կողմից կատարված խուզարկությունների ու հետաքննությունների նյութերի թերի ուսումնասիրվածությունն է:

Դեռևս խորհրդային շրջանում սկսելով դրանք հայտնաբերելու և հայերեն թարգմանելու գործը՝ մենք արխիվային պրպտումներ ենք իրականացրել Մոսկվայի Պատմության պետական կենտրոնական արխիվում, Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում (Մոսկվա), Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (այժմ՝ Ռուսաստանյան կայսրության արտաքին քաղաքականության արխիվ, ք. Մոսկվա) ու Ռուսաստանի պատմության պետական արխիվում (Սանկտ Պետերբուրգ): Շուրջ 3 տասնամյակ տևած այդ աշխատանքները մեզ թույլ տվեցին հայտնաբերել «Հայրենասերների Միության» գործունեության վերաբերյալ արխիվներում պահպանված, բայց այդպես էլ գիտական շրջանառության մեջ չդրված մեծ թվով վավերագրեր: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի՝ խուզարկությունների ժամանակ հայտնաբերված փաստաթղթեր, հարցաքննությունների նյութեր, Ոստիկանության Դեպարտամենտի առանձին օղակների՝ «Հայրենասերների Միության» վերաբերյալ զեկուցագրեր ու գրագրություն և այլն:

Ուշագրավ է հատկապես «Հայրենասերների Միության»՝ «Հրավեր հայ երիտասարդությանը» առաջին թողուցիկը (1882 թ. ապրիլ), որը կազմակերպությունը կարողացել է հեկտոգրաֆ մեքենայով բազմացնել ու տարածել երիտասարդության շրջանում: Խորհրդային շրջանում հայտնի պատմաբան, պրոֆեսոր Վ.Պարսամյանը իր աշխատության մեջ հրատարակելով «Հայրենասերների Միության» երկրորդ թողուցիկը այն սխալմամբ ներկայացրել է որպես առաջին թողուցիկ²: Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը իրավա-

1 Ավելի մանրամասն տե՛ս Վարանդեան Մ., ՀՅ. Դաշնակցության պատմություն, հատ Ա, Պարիզ, 1932, էջ 51: Տե՛ս նաև Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 108-110:

2 Տե՛ս Պարսամյան Վ., Հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմությունից, Եր., 1958, էջ 346:

ցիորեն նկատել է այդ սխալը,³ բայց ասվածն ապացուցելու համար այդպես էլ իր ձեռքի տակ չի ունեցել «Ամենայն տեղ մահը մի է» բնաբանով սկսվող առաջին թռուցիկի բնօրինակը, որի մասին իր անավարտ հուշերում հիշատակել է դեռևս Քրիստափոր Միքայելյանը⁴:

«Հայրենասերների Միության» տեսաբաններ էին համարվում Մոսկվայում գտնվող Ներսես Աբելյանը և Դավիթ Ներսիսյանը: Սակայն մենք հակված ենք ենթադրելու, որ առաջին թռուցիկի տեքստի հեղինակը վերջիններիս գործընկեր Կարապետ Տեր-Խաչատրյանն է: Ուշագրավ է, որ այս անդրանիկ թռուցիկի տակ ստորագրված է՝ «Հայաստանի ժողովրդականների (այսինքն՝ նարողնիկների – Մ. Դ.), մասնաժողովից»: Դա վկայում է այն մասին, որ կազմակերպությունն իր ձևավորման շրջանում մեծ չափով կրում էր ռուս հեղափոխական նարողնիկության ազդեցությունը, իսկ «Հայրենասերների Միություն» անվանումը սկսեց գործածվել մի փոքր ավելի ուշ:

Սա ցույց է տալիս նաև, որ թեև «Հայրենասերների Միությունը» ազգային-նարողնիկական կազմակերպություն էր և իրեն նվիրել էր հայ ազգային-ազատագրական շարժման խնդիրների լուծմանը, այդուհանդերձ նրա անդամները շարունակում էին կապեր պահպանել ու համագործակցել ռուս նարողնիկական կազմակերպությունների հետ: Թե՛ այս թռուցիկը և թե՛ ցարական ոստիկանների կողմից Կարապետ Տեր-Խաչատրյանի մոտ հայտնաբերված «Պատասխան նախկին ուսանողին իր ուսանող ընկերից» անամակ-հողվածը վկայում էին հայ երիտասարդության վրա ռուսական հեղափոխական նարողնիկության գաղափարների զգալի ազդեցության մասին:

Ուշագրավ է նաև, որ կազմակերպության անդամների մի մասը ցարական Ոստիկանության Դեպարտամենտի բացահայտ կամ գաղտնի հսկողության տակ է հայտնվել ոչ թե «Հայրենասերների Միությանն» անդամակցելու, այլ ռուսական հեղափոխական տարբեր խմբակների և կազմակերպությունների հետ համագործակցելու պատճառով: **Կարապետ Տեր-Խաչատրյանի** գործում առկա վավերագրերը որոշ հիմքեր են տալիս ենթադրելու, որ բացի մեզ հայտնի անդամներից՝ «Հայրենասերների Միության» մեջ են մտել նաև Մոսկվայում սովորող կամ այնտեղ բնակվող այլ երիտասարդներ՝ Վարդան Կարապետովը, Նիկոլայ Մելիք-Մուրադովը, Զուրաբ Ադիլխանովը, ինչպես նաև Մոսկվայի հայկական եկեղեցու հոգևորական Արտյոմ Տեր-Ղուկասովը:

Ստորև ներկայացվող արխիվային վավերագրերը հարուստ տեղեկություններ են տալիս 19-րդ դարի 80-ական թվականների այդ գործիչների հետագա ճակատագրի մասին, ինչպես նաև բացահայտում են ցարական կառավարության վերաբերմունքը հայ ազգային-ազատագրական շարժան խնդիրներով տարված ազգային-նարողնիկական կազմակերպությունների ու խմբակների հանդեպ: Դրանց թվում ուշագրավ են հատկապես «Հայրենասերների Միության» հիմնադիրներից **Դավիթ Ներսիսյանի** և նրանից միշտ անբաժան՝ հայ առաջին կին հեղափոխական **Թամարա Ազամյանի** հեղափոխական գործունեության վերաբերյալ իրականացված հետաքննությունների նյութերը: Հայ ազատամարտի պատմության մեջ իրենց ողբերգա-

3 Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, 80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարողնիկական խմբակները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, N 2, էջ 131:

4 Տե՛ս **Միքայելյան Բր.**, Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք», Պոսթըն, 1924, N 10, էջ 57:

կան ճակատագրով հայտնի այս վաղամեռիկ զույգին վերաբերվող նորահայտ վավերագրերի տպագրությամբ ավարտվում է սույն հրապարակման առաջին մասը:

Ներկայացնելով մեր բազում տարիների համառ աշխատանքի արդյունքում հավաքված ու թարգմանված «Հայրենասերների Միության» պատմությանը և նրա առանձին դեմքերի հետագա գործունեությանը վերաբերվող վավերագրերը՝ հույս ենք հայտնում, որ դրանք զգալիորեն կբարելավեն ընթերցողների տեղեկացվածությունը **ՀՅ Դաշնակցության** ակունքներում կանգնած այդ կազմակերպության ու նրա անհատ գործիչների մասին:

Մկրտիչ Դ. Դանիելյան
Պալատ. գիտ. թեկնածու

ԹԻՎ 1

Հետաքննություն

Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Քրիստափորի Խաչատուրովի կողմից «Հայ երիտասարդությանը՝ Հայաստանը Թուրքիայից անջատելու մասին» հայերեն լեզվով կոչը կազմելու հետ կապված

Մոսկվայի նահանգային
ժանդարմական վարչություն

ժանդարմական առանձին կորպուսի
պորուչիկ Չուրսինին

Կից ներկայացնելով Մոսկվայի օբեր-պոլիցմեյստերի N 3447 գրությամբ ինձ ուղարկված Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովի մոտ իրականացված խուզարկության ոստիկանական արձանագրությունը՝ դրա հետ միասին վերցված առարկայական ապացույցներով, առաջարկում եմ Ձերդ բարեձնությանը այս խնդրի վերաբերյալ իրականացնել հետաքննություն՝ ըստ 1871 թ. մայիսի 19-ի օրենքի, որը վերջացնելուց հետո ներկայացնել ինձ:

Վարչության պետի փոխարեն՝ (ստորագրությունն անընթեռնելի է)⁵:

ԹԻՎ 2

ՆԳՆ

Մոսկովյան օբեր-պոլիցմեյստեր
16 հունիսի 1882 թ.

Մոսկվայի նահանգային ժանդարմական
վարչության պր-ն պետին

Ի նկատի ունենալով Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովի սոցիալ-հեղափոխական կազմակերպությանը պատկանելու մասին տեղեկություն ստանալու փաստը, Տվերյան բաժնի 2-րդ տեղամասի՝ Բատյումկովայի տան նրա բնակարանում կատարվել է խուզարկություն, որի ընթացքում գտնվել են հայերեն լեզվով հայ երիտասարդությանն ուղղված հեկտոգրաֆ կոչի 30 օրինակներ, որում վերջիններս հրավիրվում են աջակցելու Հայաստանի ինքնուրույնության վերականգնմանը և նրա անջատմանը՝ Թուրքիայից, սևագիր նամակը հայերեն լեզվով ուղղված ուսանող ընկերոջը և հեկտոգրաֆ նամակ Միջին Կալմիկայից այնտեղ գտնվող քաղաքական և պետական հանցագործների վիճակի մասին:

Տեղեկացնելով այդ մասին, պատիվ ունեմ Ձերդ Գերագանցությանը ուղարկելու խուզարկության վերաբերյալ արձանագրությունը՝ վերը նշված կոչերի և նամակների

5 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, (ЦГА г. Москвы), ֆ. 131, ց. 38, գ. 257. թ. 1:

հետ միասին:

Բաժնի պետ (ստորագրությունն անընթեռնելի է)⁶:

ԹԻՎ 3

Արձանագրություն

1882 թ. հունիսի 6-ին առավոտյան ժամը 4/30 Տվերյան բաժնի 2-րդ տեղամասի պրիստավը Մոսկվայի օբեր-պոլիցեյմեյստերին կից պահնորդական բաժնի կարգադրությամբ ներկայացավ այդ տեղամասի Բատյունկովի տուն, որի թիվ 10 բնակարանը զբաղեցնում է Պոլինայի տատիկ Մարիա Գրիգորևնա Ֆեոդորովան, որտեղ ոչ մեծ առանձին սենյակում բնակվում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովը: Նրա սենյակում վկաների և Խաչատուրովի ներկայությամբ, որը ոստիկանության գալու պահին անկողնում քնած էր, իրականացվեց մանրագնին խուզարկություն: Խուզարկության ժամանակ հայտնաբերվեցին թերթեր, նամակներ և գրքեր հայերեն լեզվով, որոնք հավաքված էին և փակված կաշվե ճամպրուկում: Այնուհետև Տեր-Խաչատուրովի անձնական խուզարկության ժամանակ նրա սերթուկի գրպանից հայտնաբերվեցին թղթեր – մեկը կարմիր թանաքով ռուսերեն լեզվով, մյուսը հայերեն լեզվով և նա հայտարարեց, որ այդ թղթերը գրաքնությունից դուրս բովանդակություն ունեն: Ցրված թղթերի մեջ գտնված թղթապանակում հայտնաբերվեցին հեկտոգրաֆով տպագրված Տեր-Խաչատուրովի մի քանի քարտերը, բայց հեկտոգրաֆ մեքենան սենյակում չկար: Նրա սենյակում հայտնաբերվեցին երկու ոչ մեծ սրվակներ կարմիր թանաքով: Բացի վերը նշվածներից ուսանող Տեր-Խաչատուրովի սենյակում քաղաքական տեսակետից կասկածելի որևէ բան չհայտնաբերվեց⁷:

ԹԻՎ 4

Արձանագրություն

Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրով:

Կողմնակի վկա Կրեշքին Պավել Սեմյոնի, անգրագետ:

Կողմնակի վկա Բատյունկովի N 5 տան դռնապան, մոսկովյան քաղքենի Բոնիֆատի Իվանով

Ինձանից խուզարկության ժամանակ վերցվածը հետ ստացա բացի հեկտոգրաֆ եղանակով հայերեն լեզվով գրված 2 թղթերից և կարմիր թանաքով ռուսերեն գրված մեկ թերթից:

Հետ ստացա ինձանից վերցված թղթերով և թերթերով ճամպրուկը: Հետ ստացա նաև երեսուն թղթերից բաղկացած հայերեն լեզվով գրված հեկտոգրաֆ գրությունը:

Ուս. Տեր-Խաչատուրով⁸:

ԹԻՎ 5

Արձանագրություն

1882 թ. հունիսի 18-ին, ես, ժանդարմերիայի առանձին կորպուսի պորուչիկ Զուրաբինս, Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչության պետի այս տարվա

6 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ 2:

7 Նույն տեղում, թ. 3:

8 Նույն տեղում, թ. 4:

հունիսի 18-ի N 3283 հանձնարարության հետ կապված, որը վերաբերվում էր Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովից վերցված հայերեն լեզվով գրված Թուրքիայից Հայաստանն անջատելու մասին կոչին, նկատի ունենալով, որ Խաչատուրովի բնակարանում իրականացրած խուզարկության արձանագրության հետաքննական տվյալները դեռևս բավարար չեն նրան ընդգրկելու գործի մեջ որպես մեղադրյալի:

Որոշեցի՝ սկսել հետաքննությունը, բայց մինչ Խաչատուրովին որպես մեղադրյալ ներգրավելու հարցի պարզաբանումը կապվել Մոսկվայի օբեր-պոլիցմեյստերի հետ, որպեսզի այդ հաստատությանը ներկայացնի տվյալներ Տեր-Խաչատուրովի ապրելակերպի մասին: Նրա վարքագիծի ու քաղաքական հուսալիության մասին տեղեկանալ Մոսկվայի համալսարանի ռեկտորից, ինչպես նաև որպես վկաներ հարցաքննել նրա մտերիմ անձանց⁹:

ԹԻՎ 6

ՆԳՆ.
Մոսկվայի օբեր-պոլիցմեյստեր
26 հունիսի 1882 թ.

Ժանդարմերիայի կորպուս
պորուչիկ Չուրսինին

Ի հետևանս N 77 գրության՝ Պահնորդական բաժինը պատիվ ունի տեղեկացնելու Ձերդ բարեձնությանը. Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովը, Տվերյան տեղամասի Բատյումկովի տան բնակարանում խուզարկությունից հետո ուղեկցվել է Պահնորդական բաժին արձանագրության և հարցաքննության ժամանակ հայտնաբերված թղթերի հետ միասին: Ու քանի որ նրանց մեջ բացի Հայաստանի վերականգնման մասին հեկտոգրաֆ կոչերի մի քանի օրինակից, նրա քաղաքական բարեհուսության տեսակետից որևէ դատապարտելի բան չհայտնաբերվեց, նա ենթակա չէր ձերբակալության և ազատ արձակվեց: Խուզարկության համար առիթ է հանդիսացել գործակալական ճանապարհով հայտնաբերված տեղեկությունն այն մասին, որ Տեր-Խաչատուրովի մոտ կային ինչ-որ հեկտոգրաֆ պրոկլամացիաներ: Բատյումկովի տանը նա ապրում էր այս տարվա ապրիլի 22-ից, նախկինում նա ապրում էր Տվերյան տեղամասի նույն ենթահատվածի Ֆուլգենի տանը:

Տվերյան տեղամաս
Բաժնի պետ, ստորագրությունը անընթեռնելի է)¹⁰:

⁹ Նույն տեղում, թ. 5:
¹⁰ Նույն տեղում, թ. 6:

Ն.Գ.Ն.
Հրատարակությունների հսկողության
ավագ տեսուչ
27 հունիսի 1882 թ.

Ժանդարնական պահնորդական կորպուսի
պրուսիկ Չուրսինին

Ի պատասխան այս հունիսի 24-ի N 22
գրության պատիվ ունեն Ձերդ
Գերազանցությանը
վերադարձնելու իմ կողմից հաստատված՝
հայկական կոչի թարգմանությունը՝
հավելվածով:

N 1 1882 ապրիլ
Հրավեր հայ երիտասարդությանը

Ամենայն տեղ մահը մի է
Մարդ մի անգամ պիտ մեռնի
Բայց երանի որ իւր ազգի
Ազատութեան կզոհվի:

Թուրքիայի պետական կառուցվածքը վաղուց արդեն սկսել է լուծվել, քայքայվել: Թուրքիան այժմ ներկայացնում է մի հիվանդ մարմին, որի մահվան ժամը արագորեն մոտենում է, նա այս կմախքը, զուր աշխատում է յուր թուլացած ձեռներով բռնակալության և հարստահարության կապանքների մեջ պահել յուր հպատակ աշխատավոր ժողովուրդներին: Սակայն նրա բռնակալությունը արդեն ստացել է մահառիթմ հարված հույն և սլավոնական (ցեղերից) ազգերից բալկանյան թերակղզում: Թուրքիան գրկվելով յուր պետության մի այդպիսի ընդարձակ մասից, յուր բռնակալության կենտրոնը դարձրել է այժմ Փոքր Ասիան, պատմական Հայաստանը, որտեղ նա ազատ եվրոպական հսկողությունից ավելի սաստկացրել է յուր գազանավայել կառավարությունը, որպեսզի մի փոքր էլ ուշացնի յուր օրհասականը: Թուրքիայի անհուսալի կառավարության շնորհիվ Հայաստանը դարձել է ասպատակությունների, եղեռնագործությունների և հարստահարությունների ասպարեզ: Պետական ավազակաբարո պաշտոնյաները բարձր դոան աչքին սիրելի բարբարոս շեյխերի հետ միասին տանջում, չարչարում են աշխատավոր ժողովրդին: Հայաստանի մշակը, գյուղացին չունի ոչ տնտեսական և ոչ էլ անձնական ապահովություն: Մայր հողը ծանրաբեռնված բազմաթիվ և անտանելի հարկերով, չէ պատկանում գյուղացուն, երկրագործը չէ կարողանում խաղաղ յուր աշխատանքի պտուղները վայելել, նրանք բաժին են դառնում պետական և ոչ պետական հարստահարիչներին և ավազակներին¹¹: Աշխատանքի անապահովությունը հայրենիքում ստիպում է Հայաստանի մշակներին հարյուրավոր խմբերով հեռանալ հայրենի հողից և դրսում օտարության մեջ «հաց ձարել»: Նրանք գաղթում են օտար երկրներ, որտեղ և զոհ են լինում զանազան ցավերի և թշվառությունների: Բացի այս տնտեսական չարիքներից, Հայաստանի ժողովրդի գլխին միշտ կախ է անանց բարբարոսության և կանայականության լափող սուրբ: Նրա կրոնը հայհոյվում է, նրա սրբավայրերը ապականվում են, նրա որդիները արյունարբու բաշիբոզուկների սրի ձարակ են լինում, նրա օրհորդների գեղեցկությունը և կուսությունը զոհվում են ասիական վայրենի վավաշտոնների գազանական զգացմունքներին և այս բոլորի վրա Թուրքիայի օրենքները ներողամտաբար և անտարբեր են նայում: Բայց երբ մի հու-

11 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ. 10:

սահատված անձ, վառված անպաշտպանության զգացմունքով, զենք է բարձրացնում յուր պատիվը, յուր կյանքը պաշտպանելու, այն ժամանակ մեռած օրենքները հարություն են առնում, հրամայում են երկայթա շղթաներով կաշկանդել այդ համարձակի ոտները և ձեռները, մութ, խոնավ բանտը բացել և այնտեղ կենդանի թաղել սուր բարձրացնողին:

Հայաստանի ժողովրդի աչքը ջուր է կտրել սպասելով Բեռլինի դաշնագրի 61 հոդվածով նախատեսված ռեֆորմաներին: Եվրոպական դիպլոմատիան համարյա բոլորովին անտարբեր է դեպի Թուրքիայի ներքին գործերը, Եվրոպայի գլուխն էլ խառն է յուր ներքին հասարակական և տնտեսական գործերով, այս պատճառով էլ նա շատ էլ եռանդով չի հրավիրում Թուրքիային իր մեղքերը քավելու: Միայն երբեմն երբեմն Ազգլիան ձայն է բարձրացնում Հայաստանի ռեֆորմաների օգտին, բայց նրա ձայնը շատ նվազ է Թուրքիայի գիտությամբ խլացած ականջների համար: Իսկ ինքը Թուրքիայի կառավարությունը աղվեսական խորամանկությամբ գործը օրեցօր հետաձգում է քրդական միության և քրդական արշավանքի և սորանց նման հարցեր և շարժումներ ստեղծելով և որ ավելի զգվելի է, նա ձեռնամուխ է լինում ոչնչացնելու հայ ժողովրդի ունեցած իրավունքներն էլ:

Հայ ժողովրդին մնում է միայն իր սեփական միջոցներով, ուժով, իր արյան գնով ձեռք բերել մարդավայել գոյության իրավունքները: Նա լավ գիտե թե ում քաղցր է ազատությունը, ով ուզում է մտավորապես և բարոյապես ազատ զարգանալ, նա պատրաստ պետք է լինի թափել յուր արյունը հանուն ազատության¹²: Հայաստանի ժողովուրդը այս ամենը հասկանում է և մոտ է ժամը, երբ ազատության անունով ժողովրդական շարժումը իր ալիքներով կոռոզի Հայաստանի սարերը և ձորերը:

Հայ երիտասարդներ հասել է այն թույլ, երբ հայրենիքը գոհ է պահանջում մեզանից, երբ մենք էլ մեր բոլոր հոգեկան և ֆիզիկական ուժերը պիտի գոհ բերենք ժողովրդի ազատության գործին: Մի զգացմունք միայն պետք է վառի մեր սրտերը – անձնանվեր սերը դեպի ժողովուրդը, մի գաղափար պետք է բորբոքէ մեր մտքերը – ժողովրդի տնտեսական և քաղաքական ազատության¹³ բարձր գաղափարը: Թող այս զգացմունքը և գաղափարը միավորեն շողկապեն մեզ բոլորիս ի մի հզոր անխախտ խումբ, որը զրահավորված գիտություններով և արհեստներով շտապե դեպի հայրենիքը կատարելու յուր վսեմ և մեծ պարտավորությունը դեպի ժողովուրդը¹⁴: Երիտասարդ եղբայրներ, հիշենք թե ինչ դեր կատարեցին իրանց հայրենիքի ազատության գործում Հունաստանի, Իտալիայի և սլավոնական երկրների անմահ երիտասարդները և պատրաստվենք կատարելու մեր պատմական դերը Հայաստանում: Միթե հայ երիտասարդությունը անտարբեր է և սառը դեպի իր ժողովրդի թշվառությունը, միթե նրա ականջին չի հասնում ժողովրդի հառաչանքի ձայնը, միթե ժողովրդի ցավով չէ ցավում նրա սիրտը, միթե Հայաստանի մշակի արյունով և քրտինքով թաթախված գունաթափ և վշտալի երեսը չէ վառում, բորբոքում հայ երիտասարդության ոգին: Բայց քանի որ Հայաստանի երկրագործը հառաչում է բռնակալության և հարստահարության լծի տակ, քանի որ նա չունի տնտեսական և անձնական ապահովություն, հայ երիտասարդությունը կյանքի ուրիշ խնդիր չունի, եթե ոչ – անձնանվեր ծառայել Հայաստանի աշխատավորների ազատության գործին, և նա պարտավոր է բոլոր իր գոյությամբ հետևել իր կոչմանը: Ուրեմն հայ երիտասարդներ, ժողովենք մեր ուժերը, միանանք մի զգացմունքով, մի գաղափարով, խմբեր կազմենք և շտապենք օգնելու արդեն հայրենիքի ազատության անու-

12 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում:

13 Սա 1890-ին ՀՅ Դաշնակցության Մանիֆեստում առաջադրված կուսակցության հիմնանպատակի նախնական ձևակերպումն է, որում առկա է միայն մեկ էական տարբերություն: Եթե ՀՅԴ Մանիֆեստում խոսվում է ժողովրդի քաղաքական և տնտեսական ազատագրության մասին, ապա այստեղ ձիշտ հակառակը՝ տնտեսական և քաղաքական: Դա հեղափոխական նարողնիկության գաղափարախոսական առաջնահերթությունների անմիջական վերարտադրության արդյունքն է:

14 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ.11:

նով կազմված ընկերությանը, որի անդամները գտնվում են զանազան հայաբնակ կենտրոններում: Հարկավոր է նյութական օգնություն, անձնական օգնություն, թող յուրաքանչյուրը մեզանից շտապե յուր զոհաբերելու այս սուրբ գործին: Հայ երիտասարդներ, Հայաստանը առաջինն է, որ բարձրացնում է Արևելքում ժողովրդական ազատության դրոշակը, մեր պարտքն է դարձնել այդ դրոշակը Արևելքի բոլոր հարստահարված ժողովուրդների առաջնորդող աստղը և նրա հովանավորության տակ գումարելով արևելքի բոլոր ազգերի ճշմարիտ ժողովուրդներին և ճշմարիտ մշակներին ասիական բռնակալությանը և հարստահարությանը մահառիթ պատերազմ հայտնել: Ահա միակ պայմանը, երբ Հայաստանի շարժումը կարող է օգտվել Հին և Նոր աշխարհի արդարության անունով, կոմիդների համակրությամբ, միակ պայմանը, երբ Հայաստանը պարծանքով և իրավմամբ կարող է ասել, որ նրա պատմական կոչումն է ծառայել Արևելքի լուսավորությանը: Հայ երիտասարդներ, արևելքից դեպի արևմուտք, հյուսիսից դեպի հարավ եղբայրական ձեռք մեկնենք նրանց, որոնց միակ ձգտումը, միակ ցանկությունն է կռվել բռնակալության դեմ ու ձեռք բերել աշխատավոր ժողովրդի տնտեսական և նյութական ազատությունը, ընթանանք նրանց հետ այն ճանապարհով, որով գնում են բոլոր անձավեր ոգիները և հայրենիքի սիրուց զգացմունքով լի սրտերը, գնանք այն ճանապարհով, որ տանում է մեզ դեպի անձնագոհություն, իսկ ժողովրդին դեպի երջանկություն: Հեռու մեզանից եսական զգացմունքները, հեռու մեզանից նյութական հարմարությունները: Մենք չենք ծնված փափուկ ապրելու համար: Մենք երկրպագող չենք զվարճություններին և անձնական բավականություններին, մեր հավատն է ժողովրդի երջանկությունը, մեր գործն է անձնագոհ ծառայությունը այս անմահ գաղափարին:

Հայաստանի ժողովրդականների մասնաժողովից¹⁵:

ԹԻՎ 8

Պատասխան նախկին ուսանողին իր ուսանող ընկերից

Որպիսի հուսահատություն, որպիսի փոքրգություն...

Ճշմարիտն ասած, ես չէի հավատալ, թե դու ես այդ հուսահատ անհատը, եթե արտագրած չտեսնեի քո անվան ու ազգանվան սկզբնատառերը: Ասում ես, թե թշվառ ես, որովհետև ապրում ես մի յետ ընկած, անիծված գյուղում, որտեղ չկա ոչ մի բովանդակություն, որտեղ, քո ասելով, մարդիկ չկան, որոնց հետ կարողանայիր խոսել այդ բառի լայն նշանակությամբ: Հավատում եմ քեզ, հասկանում եմ քո դրությունը, որովհետև ես էլ եմ իմ բախտը անիծել, այդպիսի դեր քաշել: Բայց գիտես սիրելի ընկեր, ինչից է, որ գյուղական կյանքը այդ աստիճան քեզ անտանելի է թվում և այդպես տխուր տպավորություն գործում քեզ վրա, որ այն աստիճան հուսահատված կամենում ես թե առնել, թռչել մի այլ տեղ, որտեղ մարդիկ են ապրում: Լսիր ուրեմն ասեմ պատճառը: Այդ նրանից է, որ դու միայն ծաղրում ես, արհամարանքով ես նայում քեզ շրջապատողների վրա, շատ քիչ ես հետաքրքրվում նրանցով, խոսացնում ես և առանց նրանց ցավերը հասկանալու, աշխատում ես գլխիցդ շուտով ռադ անել, խմացնելով մի քանի թաս ոգելից ըմպելիք: Պատում եմ, որ գժի պես ականջներդ բռնած փախչում ես սենյակդ, երբ լսում ես այս նահապետական ժողովրդի յուր նահապետական խոսակցությունը, որը վերաբերվում է նրանց առօրյա կյանքին և դրանով չբավականանալով վեր ես առնում լրագրի թերթը, որ չտեսնես այդ իրականության պատկերը, որ քեզ այդչափ հուսահատեցնում է: Հավատացնում եմ քեզ, սիրելի ընկեր, եթե այդպես վարվեր մեկ ուրիշը, դու նրան անպատճառ մի այլ անունով կկնքեիր: Հավատում եմ քեզ, որ դու փախչում ես: Մեր բոլոր դժբախտությունը և ցավը հենց դրանում է, որ մենք փախչում ենք մեր ժողովրդից, ուզում եմ ասել գյուղացուց, որովհետև նրանք են մեր ժողովուրդը, մեր

¹⁵ Միսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Միսկվա, նույն տեղում, թթ. 10-13:

ուժը, մեր աշխատավոր դասը, նրանց ենք պարտական, որ մինչև այժմ գոյություն ունենք, առանց նրանց մի մեծ զանազանություն չի լինի մեր և Իսրայելի զավակների մեջ: Ուրեմն փախչել ժողովրդից, այն էլ հուսահատ կերպով, այդ ավելի քան դատապարտելի է մի անհատի համար, որը ուսանող է եղել, որի համար մի նոր և խորթ բան չէ ժողովրդի, գյուղացու, ամբոխի մեծ նշանակությունը, որ նա ունի ամեն մի ազգի կյանքի մեջ: Մենք հաճախ կարդում ենք մեր լրագրերի մեջ, որ մեր թարմ ուժերը, ուսում առած երիտասարդները պետք է գնան Հայաստան, ուսումնասիրեն նորան, գործեն այնտեղ, այն նվիրական երկրում, որի բնակիչները, որոնց մենք մեր հարազատ եղբայր ենք անվանում, քեզ վաղ հայտնի է, որ թե իրանց չարքաշ կյանքով, թե վարքով, թե բարքով, թե սովորություններով միևնույն գյուղացիքն են, որոնցից դու փախչում ես, որոնց դու չես ուզում տեսնել այդ անհիծված գյուղում: Միթե այդ բոլորը դատարկ խոսքեր են ու ֆրագներ: Միթե այդ երիտասարդներից մեկն էլ դու չես, որին բախտը զցել է Հայաստանի մի այլ անկյուն, բայց ես չասացի քեզ, սիրելի ընկեր, թե ինչից է, որ գյուղական այդ պարզ կյանքը այն աստիճան անտանելի է թվում քեզ և այնպիսի տխուր տպավորություն թողնում քեզ վրա, որ դու հուսահատված կամենում ես թև առնել, թռչել մի այլ տեղ, որտեղ մարդիկ են ապրում: Լսիր, ուրեմն, ասեմ դրա պատճառը: Այդ նրանից է, որ դու միայն ծաղրում ես, արհամարանքով ես նայում քեզ շրջապատող կրթության կարոտների վրա, շատ քիչ ես հետաքրքրվում նրանցով, խոսացնում ես և առանց նրանց ցավերը հասկանալու, աշխատում ես գլխիցդ շուտով ռադ անել, որ գահլեդ շատ չտանեն, խմացնելով մի քանի թաս ոգելից ըմպելիքից: Փորձիր սիրելիս, մոտենալ այդ հայ գյուղացուն, որը դեռ ապրում է... (անընթեռնելի է) պարզության մեջ, մասնակից լինել նրա ուրախությանը և տրտմությանը, մի խոսքով ուսումնասիրիր նրան և դու կհամոզվես, որ նա ունի շատ արժանավորություններ, որոնցից զուրկ են մեր քաղաքների ինքնակոչ քաղաքակրթվածները»¹⁶:

ԹԻՎ 9

Ժողովրդական լուսավորության
նախարարություն
Մոսկվայի կայսերական
համալսարանի ռեկտոր
9 հուլիսի 1882 թ.

Մոսկվայի նահանգային ժանդարմական
վարչության պ-րն պետին

Ի պատասխան այս հուլիսի 3-ի գրության, պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ գերազանցությանը, որ 1881 թ. Մոսկվայի համալսարան ընդունված բժշկական ֆակուլտետի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովը ներկայումս նշված ֆակուլտետի 2-րդ կուրսում է, հասցրել է սովորելու ընթացքում ցուցաբերել լավ վարքագիծ, համալսարանի պատերի ներսում քաղաքական բարեհուսությունը վարկաբեկող արարքներ Կարապետ Տեր-Խաչատուրովի մոտ չեն եղել¹⁷:

ԹԻՎ 10

Արձանագրություն

1882 թ. հուլիսի 20-ին Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչությունում Մոսկվայի նահանգային դատարանի դատախազի ներկայությամբ որպես վկա հարցաքննության ենթարկվեց ներքոհիշյալը:

Ինձ անվանում են Կարապետ Քրիստափորի Տեր-Խաչատուրով:

16 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թթ. 14-16:
17 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ. 5:

Կրոնական պատկանելությունը՝ հայ գրիգորյան 27 տարեկան, կոչումը՝ հոգևորականի գավակ, Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող: Հետաքննության և դատվածության մեջ չեն եղել: Առաջադրված հարցերին պատասխանում են.

Ես Մոսկվա եմ եկել 1881 թ. Քութայիսից՝ ակադեմիական տարվա սկզբին և ընդունվել Մոսկվայի համալսարան: Մոսկվայում ինձ մտերիմ ծանոթներից կարող եմ նշել Մոսկվայի հայկական եկեղեցու հոգևորական Տեր Դուկատովին, որի մոտ ես հաճախ եմ լինում, ուսանողներից ես ճանաչում եմ իմ հայրենակիցներից՝ Մոսկվայի համալսարանի ուսանող Մարգար Արտեմովին, այնուհետև նույն Մոսկվայի համալսարանի ուսանողներ Ալեքսանդր Կարապետովին, Նիկոլայ Մելիք-Մուրադովին, որը ապրում է Բոգորոդսկայա գյուղում գտնվող ամառանոցում, ես ճանաչում եմ նաև Մոսկվայում բնակվող Զուրաբ Ադիլխանովին, որն ապրում է Մոսկվայում, Զսամենսկի նրբանցքում: Ահա ինձ շատ թե քիչ ծանոթների ողջ շրջանակը¹⁸:

Իմ մոտ հայտնաբերված 30 օրինակ հայերեն լեզվով գրված կոչի մասին կարող եմ ասել հետևյալը: Այդ հոդվածը կազմվել է և տպագրվել է իմ կողմից, իմ սենյակում: Սակայն գիտակցելով իմ բռնած գործի անհնարին լինելը և ոչ օրինականությունը, ես այն չավարտելով դադարեցրի տպագրելով միայն երեսուն օրինակով իմ մոտ գտնված երկու էջերը: Ես տպագրությունը դադարեցրի նպատակ ունենալով գործել օրինական ճանապարհով, այն է, վերափոխել այդ հոդվածը և տեղադրելուդարկել Թիֆլիսում հրատարակվող հայկական թերթերից որևէ մեկում: Եվ իմ այդ նպատակը հայտնի էր միայն Մոսկվայի համալսարանի չորրորդ կուրսի ուսանող Մարգար Արտեմովին: Ինչ վերաբերում է մասսային¹⁹ ես այն ձեռք եմ բերել անցած տարի, չեմ հիշում թե երբ, խանութում, 2 ֆունտ քանակով: Հեկտոգրաֆ մեքնան ոչնչացվել է իմ կողմից:

Իմ մոտ հայտնաբերված կոչը ես ոչ մեկին չեմ տվել, բացի երեք կամ չորս օրինակներից, որոնք ես տվել եմ Մարգար Արտեմովին առանց որևէ որոշակի նպատակի, այլ միայն կարողալու նպատակով: Խուզարկության ժամանակ ինձնից վերցված հեկտոգրաֆիական մեքենայով և կարմիր թանաքով կես էջի վրա տպագրված Միջին Կալմիկայից ստացված նամակը, որ սկսվում էր «Մեզ բոլորին Միջին Կալմիկիայից» և ավարտվում էր «Այս հարցի վերաբերյալ թղթերի պատճենների մեզ տվել են» բառերով, ես գտել եմ համալսարանի այգում, փայտյա նստարանի տակ այս տարվա ապրիլի սկզբներին:

Խուզարկության ժամանակ ինձնից վերցված հայերեն լեզվով նամակը «Պատասխան նախկին ուսանողին իր ուսանող ընկերից» վերնագրով գրված է իմ կողմից անցած տարվա նոյեմբերին՝ նպատակ ունենալով տպագրել Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթում, այդ նույն թերթում անցած տարվա հոկտեմբերին տպագրված «Նախկին ուսանողին իր ընկերոջը» հոդվածի կապակցությամբ: Բայց տեսնելով, որ «Մշակ» թերթում արդեն հայտնվել է նախկին ուսանողի նամակին գրված պատասխանը, ես իմ հոդվածը անավարտ վիճակում թողեցի և այն ընկած էր իմ թղթերի մեջ:

Հայերեն լեզվով տպագրելով կոչը, ես նպատակ ունեի նրանում ամկա գաղափարները տարածել հայերի մեջ և նրա տարածման ուղիները և իմ կողմից չէին հստակեցված ու որոշված: Միակ ուղին, որ ես նկատի ունեի, դա փոստն էր, որի միջոցով ես կարող էի հասցեագրել տարբեր մարդկանց՝ իմանալով միայն նրանց ազգանունները: Պատճառը, որ ես թողեցի այն գործը, որը սկզբում ձեռնարկել էի նա էր, որ ես եկա այն համոզման, որ լիովին գիտակցեցի իմ ընտրած ուղու անօրինական բնույթը, որն է իմ կողմից այդ ձևով հասարակական կարծիքի վրա ինչ-

18 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ.19:
19 Տպագրության հետ կապված նյութ:

որ նարողնիկների ընկերության անունից ազդելու ոչ ազնիվ եղանակի գիտակցումը, որն իրականում գոյություն չի ունեցել և գոյություն չունի: Այլևս ոչինչ չունեն ավելացնելու²⁰:

ԹԻՎ 11

Արձանագրություն

1882 թ. հուլիսի 20-ին Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչությունում որպես վկա Մոսկվայի նահանգային դատարանի դատախազի ներկայությամբ հարցաքննության ենթարկվեց ներքոհիշյալը

Ինձ անվանում են Վարդան Պապիևիչ Կարապետով
Կրոնական պատկանելությունը՝ հայ գրիգորյան
23 տարեկան, կոչումը՝ Երևան քաղաքի քաղքենու զավակ, Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող:
Ջբաղմունքը – դատախոսություններ են լսում Մոսկվայի համալսարանում:

Ինձ առաջադրված հարցերին պատասխանում եմ. Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովին ճանաչում եմ: Նրա հետ ծանոթացել եմ Թիֆլիս քաղաքում, երբ նա դեռևս սովորում էր այնտեղ միևնույն դասական գիմնազիայում: Անցած տարի օգոստոսին գալով Մոսկվա, ես հանդիպեցի նրան և մենք պայմանավորվեցինք միասին բնակվել: Այնուհետև մոտ չորս ամիս առաջ մենք բաժանվեցինք: Նրա հետ իմ ծանոթության ընթացքում որևէ քաղաքական բնույթի խոսակցություն մեր միջև չի եղել: Հարցաքննության ժամանակ ինձ ներկայացված հեկտոգրաֆով տպագրված հայ երիտասարդությանը ուղղված կոչը (Թուրքիայից Թուրքական Հայաստանի առանձնանայլու մասին) ես նրա մոտ չեմ տեսել: Նա նույնիսկ չի արտահայտվել որևէ թռուցիկ հրատարակելու իր մտադրության մասին: Հարցաքննության ժամանակ ինձ ներկայացված և նույնպես հեկտոգրաֆ մեքենայով տպագրված Միջին Կալմիկիայից ստացված նամակը Տեր-Խաչատուրովը նույնպես ցույց չի տվել և ինձ ոչինչ չի ասել դրա մասին: Նրան ավելի մտերիմ ընկերների ես չեմ ճանաչում»²¹:

ԹԻՎ 12

Արձանագրություն

1882 թ. հուլիսի 29-ին Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչությունում որպես վկա Մոսկվայի նահանգային դատարանի դատախազի ներկայությամբ հարցաքննության ենթարկվեց ներքոհիշյալը:

Ինձ անվանում են Արտյոմ Կիրիլի Տեր-Ղուկասով
Կրոնական պատկանելությունը՝ հայ գրիգորյան
52 տարեկան, կոչումը – եկեղեցու հոգևորական
Առաջադրված հարցերին պատասխանում եմ:

Ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովին ես ճանաչում եմ որպես (անընթեռնելի է), նա հաճախ է ինձ հյուր եկել, քաղաքական բնույթի խոսակցություն մեր միջև երբեք չի եղել, ինչպես նաև նա ինձ չի ասել իր կողմից կազմված հայերեն լեզվով Թուրքիայից Հայաստանը անջատելու մասին թռուցիկի վերաբերյալ:

20 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ.թ. 19-20:

21 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ. 25:

Խաչատուրովին եւ գիտեն որպէս լավ անձնավորություն²²:

ԹԻՎ 13

Արձանագրություն

1882 թ. օգոստոսի 25-ին Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչություն- նում Մոսկվայի նահանգային դատարանի դատախազի ներկայությամբ որպէս վկա հարցաքննության ենթարկվեց ներքոհիշյալ ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովը, որը առաջադրված հարցերի վերաբերյալ պարզաբանեց.

Որպէս լրացում այս տարվա հուլիսի 20-ին իմ կողմից տրված ցուցմունքների, բացատրում եմ, որ ոչ այնքան բարձրահասակ, սև մորուքով, փոքր ինչ նիհար և բավականին երկար մազերով պարոնը հանդիսանում է Մոսկվայի համալսարանի ուսանող Սարգար Արտեմովը, որը հաճախ էր ինձ մոտ լինում, երբ ես ապրում էի Տվերյան տեղամասում Ֆոլցֆելնի տանը: Արտեմովը մի քանի անգամ է եղել ինձ մոտ Օլգա Ալեքսանդրովնայի հետ, որի ազգանունը չգիտեմ, բայց նա ապրում է Մոսկվայի համալսարանի ուսանող Նիկոլայ Պետրովիչ Յվետովի բնակարանում, որը բնակվում է Տվերյան տեղամասի 2-րդ բաժնի Ֆոլցֆելնի տան N 216-ում:

Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրով²³:

ԹԻՎ 14

Բաքվի նահանգային
ժանդարմական վարչության
պետ
13 օգոստոսի 1882 թ.

Պատիվ ունեն տեղեկացնելու Ձերդ
բարեձնությանը, որ հարցաքննության
ենթակա Մոսկվայի համալսարանի
ուսանող Սարգար Արտեմովը
մանրակրկիտ որոնումներից հետո Բաքվում

չհայտնաբերվեց, բայց ձեռք բերված տեղեկությունների համաձայն նա երկու ամիս առաջ կարձ ժամանակով եղել է Բաքվում, սակայն որտեղ է մեկնել, հայտնի չէ²⁴:

ԹԻՎ 15

Արձանագրություն

1882 թ. օգոստոսի 21-ին Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչություն- նում Մոսկվայի նահանգային դատարանի դատախազի ներկայությամբ որպէս վկա հարցաքննության ենթարկվեց ներքոհիշյալը:

Ինձ անվանում են Օլգա Ալեքսանդրովնա Պյատկինա
Կրոնական պատկանելությունը՝ ուղղափառ
22 տարեկան

Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովին ճանաչում եմ: Երեք անգամ ես եղել եմ նրա մոտ ինձ ծանոթ Սարգար Արտեմովի հետ, բայց կոնկրետ երբ եմ եղել Խաչատուրովի մոտ չեմ հիշում: Մեր միջև քաղաքական բնույ- թի խոսակցություններ չեն եղել²⁵:

22 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ. 27:
23 Նույն տեղում, թ. 29:
24 Նույն տեղում, էջ 28:
25 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ. 30:

Արձանագրություն

1882 թ. սեպտեմբերի 8-ին Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչությունում Մոսկվայի նահանգային դատարանի դատախազի ներկայությամբ որպես վկա հարցաքննության ենթարկվեց ներքոհիշյալը:

Ինձ անվանում են Ջուրաբ Գերասիմի Ադիլխանով:

Կրոնական պատկանելությունը՝ հայ գրիգորյան:

30 տարեկան, կոչումը՝ Երևանյան նահանգի Ալեքսանդրապոլ քաղաքի բնակիչ:

Կրթությունը – հայերեն լավ գիտեմ, ռուսերեն գրում եմ և կարդում եմ շատ վատ:

Ջբաղմունքը՝ երկրորդ գիլդիայի վաճառական Մելքոնովի մոտ ապրանք ընդունող:

Առաջադրված հարցերին պատասխանում եմ.

Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովին ճանաչում եմ, նրա հետ ծանոթացել եմ մի հայ վաճառականի՝ Պողոտովի մոտ, էրիվանում: Ինձ ներկայացված հայերեն լեզվով թռուցիկը Թուրքիայից Հայաստանը անջատելու մասին, ինչպես նաև Միջին Կալմիկայից ստացված նամակը նա ինձ ցույց չի տվել: Հիշյալ թռուցիկի հետ կապված և ընդհանրապես քաղաքական բնույթի գործերի հետ կապված Խաչատուրովի հետ որևէ խոսակցություն չի եղել: Խաչատուրովի ծանոթներին ես չեմ ճանաչում²⁶:

Արձանագրություն

1882 թ. սեպտեմբերի 8-ին Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչությունում Մոսկվայի նահանգային դատարանի դատախազի ներկայությամբ որպես վկա հարցաքննության ենթարկվեց ներքոհիշյալը:

Ինձ անվանում են Մարգար Միխայլովիչ Արտեմով

Կրոնական պատկանելությունը՝ հայ գրիգորյան

23 տարեկան, կոչումը՝ Անդրկովկասյան երկրամասի բնակիչ, Մոսկվայի կայսերական համալսարանի բժշկական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող:

Առաջադրված հարցերին պատասխանում եմ.

Մոսկվայի կայսերական համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատրյանին ճանաչում եմ: Ես նրա հետ ծանոթացել եմ 1873 թ. Թիֆլիսի դասական գիմնազիայում, որտեղ ես ընդունվել էի 1872 թ. և մեր ծանոթությունը շարունակվում է մինչև հիմա: Մենք իրար մոտ հաճախ էինք լինում և մեր հարաբերությունները բարեկամական են: Տեր-Խաչատրյանի մտերիմ ծանոթներից ես ճանաչում եմ հոգևորական Տեր-Ղուկասովին, Մելիք-Մուրադովին և Կարապետյանցին (Կարապետով): Ինձ ներկայացված հայերեն լեզվով թռուցիկը (հայերեն լեզվով գրված և հայ երիտասարդությանը ուղղված թռուցիկը Թուրքիայից Հայաստանի առանձնանալու մասին) կազմել է Տեր-Խաչատուրովը և նրա իսկ խոսքերով նշված թռուցիկը տպագրվել է ինչ-որ մասսայի միջոցով՝ սովարաթղթի վրա, բայց ինչ քանակի օրինակներով է տպագրվել նշված թռուցիկը, չեմ հիշում: Թեպետ Տեր-Խաչատուրովը ձեռք էր բերել տպագրական միջոց (մալմիցա), բայց նա այդ մասին ինձ չէր ասել և հարցրել եմ

²⁶ Նույն տեղում, թ. 26:

այդ մասին նրան՝ չեմ հիշում: Տեր-Խաչատուրովը ինձ բերել էր այդ թռուցիկի երկու թե երեք օրինակներ, որպեսզի ես կարդայի և ուղղեի, ընդ որում նա նշեց այդ թռուցիկների նպատակը, այն է՝ փորձել նպաստել Թուրքահայաստանի անջատմանը՝ Թուրքիայից: Կարդալով նշված թռուցիկը, ես իմ կարծիքը հայտնեցի, որ այդպիսի թռուցիկների միջոցով անհնար է հասնել նշված նպատակին, և խորհուրդ տվեցի նրան ձգտել հրատարակել նշված թռուցիկը որևէ հայկական թերթում և ինքը՝ Տեր-Խաչատուրովը իմ հետ համաձայնվեց, ավելացնելով, որ ինքը գրեթե նույն ձևով է ստածում, թեպետ տպագրել էր վերը նշված թռուցիկը: Մեր խոսակցությունները գրեթե միշտ անկեղծ էին, որոնց ընթացքում նա հաճախ էր ինձ դիմում խորհուրդների համար, որպես բարձր կուրսի ուսանողի: Նշված թռուցիկը, որքան հիշում եմ, Տեր-Խաչատուրովը մտադիր էր տարածել գործերով Թուրքիայից և Կովկասից եկած վաճառականների կամ այլ անձանց միջոցով, բայց գիտակցելով այդ գործի անհնարին և անօրինական լինելը, նա իր այդ նպատակը չիրագործեց:

Թռուցիկի կազմման նախաձեռնությունը պատկանում է բացառապես Տեր-Խաչատուրովին, գործակիցներ այս գործում, ինչպես նաև որևէ ընկերություն Տեր-Խաչատուրովի խոսքերով այս գործում չեն եղել: Տեր-Խաչատուրովի ինձ տված թռուցիկները որտեղ եմ պահել չգիտեմ, հնարավոր է դրանք հանել եմ գրպանիցս: Իմ ծանոթներից որևէ մեկին այս թռուցիկը չեմ տվել կարդալու համար: Ինձ ներկայացված Միջին Կալմիկիայից նամակը (հեկտոգրաֆ մեքենայով կարմիր թանաքով կես էջի վրա տպագրված Միջին Կալմիկիայից նամակը, որ սկսվում էր «Մեզ բուրխա Միջին Կալմիկիայում» խոսքերով) լինելով Տեր-Խաչատուրովի մոտ, թվում է, մի անգամ եմ տեսել միայն, բայց նրա բովանդակությունը ինձ հայտնի չէ, քանի որ այն ես չեմ կարդացել: Թե ինչպես է այն ընկել Խաչատուրովի մոտ, ինձ հայտնի չէ և ինքս էլ այդ մասին Տեր-Խաչատուրովին չեմ հարցրել: «Պատասխան նախկին ուսանողին իր ուսանող ընկերոջից» հայերեն լեզվով ինձ ներկայացված նամակը Տեր-Խաչատուրովի մոտ չեմ տեսել և նրա մասին ոչիչև չգիտեմ; Այլևս ոչիչև չունեմ ավելացնելու»²⁷:

ԹԻՎ 18
Արձանագրություն

1882 թվականի հուլիսի 24-ին Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչությունում Մոսկվայի նահանգային դատարանի դատախազի ներկայությամբ որպես վկա հարցաքննության ենթարկվեց ներքոհիշյալը

Ինձ անվանում են Նիկոլայ Եգորի Մելիք-Մուրադով:
Կրոնական պատկանելությունը՝ հայ գրիգորյան:
22 տարեկան, կոչումը՝ խորհրդականի օգնականի որդի
Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող:
Առաջադրված հարցերին պատասխանում եմ:

Մոսկվայի կայսերական համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովին ձանաչում եմ երբ դեռևս Թիֆլիսի դասական գիմնազիայի գիմնագիստ էի: Բայց քանի որ նա ինձնից երկու դասարան բարձր էր (այսինքն նա 7-րդ դասարան էր, իսկ ես 5-րդ), ես նրան մոտիկից ձանաչել չէի կարող: Թիֆլիսում նա ինձ հետ ծանոթ էր մոտ մեկ տարի, որից հետո Տեր-Խաչատուրովը մեկնեց Քութայիս՝ այնտեղ հասունության քնություն հանձնելու, որից հետո մեր ծանոթությունը պր-ն Տեր-Խաչատուրովի հետ բոլորովին ընդհատվեց: Մեկնելով Մոսկվա ես հանդիպեցի նրան և վերականգնեցի իմ ծանոթությունը նույն ձևով, ինչպես Կովկասում Թիֆլիս քաղաքում: Մենք իրար մոտ շատ հազվադեպ էինք լինում՝ այն էլ կապված

27 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, ք. Մոսկվա, նույն տեղում, թ. 31-32:

համալսարանի մեր պարապունքներին առնչվող հարցերով:

...Տեր-Խաչատուրովի հետ իմ ծանոթության ընթացքում ես նրա հետ քաղաքական բնույթի որևէ խոսակցություն չեմ ունեցել և հարցաքննության ժամանակ ինձ ներկայացված հայերեն լեզվով կոչը ուղղված հայ երիտասարդությանը և հեկտոգրաֆ մեքենայով տպագրված Միջին Կալմիկայից ստացված նամակը ես նրա մոտ չեմ տեսել: Նշված թուցիկը տպագրելու մասին իր մտադրության վերաբերյալ նա ինձ ոչինչ չի ասել: Այլևս ոչինչ չունեմ ավելացնելու»²⁸:

ԹԻՎ 19

Որոշում

1882 թվականի սեպտեմբերի 10-ին ես, ժանդարներիայի առանձին կորպուսի պորուչիկ Չուրախնս, ուսումնասիրելով այս հետաքննությունը, որը նպատակ ուներ բացահայտել Մոսկվայի համալսարանի ուսանող Կարապետ Տեր-Խաչատուրովի կենսակերպը, վարքագիծը և քաղաքական բարեհուսությունը, չհանգեցի այնպիսի տվյալների հայտնաբերմանը, որոնք կմատնանշեին Տեր-Խաչատուրովի պատկանելությունը որևէ կազմակերպության կամ նրա գործունեության ուղղվածությունը դեպի հեղափոխական տեսությունները, այդ պատճառով էլ չեմ ներկայացվել բավարար հիմքեր նրան որևէ պետական հանցագործության մեջ ներառելու համար²⁹:

ԹԻՎ 20

Կովկասի քաղաքացիական
մասի պետ

7 սեպտեմբերի 1883 թ.

Ք. Թիֆլիս

Ողորմած Տեր
Պյոտր Վասիլևիչ

Անցած օգոստոսի 18-ի խորհրդապահական նամակում Ձերդ Գերագանցությանն իմ կողմից հաղորդվել է Ինքնակալ Կայսեր Բարձրագույն կամքը Էրիվանի գիմնազիայի տնօրեն Բրաժնիկովի³⁰ վիրավորելու գործի հետաքննությանը հայտնաբերված Անդրկովկասի հայ բնակչության որոշ մասի շրջանում առկա ազգային-անջատողական միտումների դեմ նախազգուշական միջոցներ ձեռնարկելու մասին և խնդրում ենք տեղեկացնել միջոցների մասին:

Էրիվանում հայտնաբերված հայկական խմբակի գործունեությունը, իմ համոզմամբ, իրենից որևէ լուրջ բան չի ներկայացնում ինչպես խմբակի նպատակներին համակիր անձանց սահմանափակ թվի, այնպես էլ այն պատճառով, որ նրա խնդիրը առավելապես ուղղված է եղել ազգային-հայրենասիրական շարժման արթնացմանը փոքր-ասիական հայերի մոտ՝ ընդդեմ Թուրքական տիրապետության: Ռուսահպատակ հայերի մեջ այդ տիպի շարժման տարածման վտանգի համար հիմքեր ներկայումս չկան:

Այդ միջոցները իմ կարծիքով պետք է հանգեն հետևյալին

1. Գլխավորը և առաջնայինը՝ անհրաժեշտ է արմատական կերպով փոխել Կովկասում կառավարական կրթական իշխանության վերաբերմունքը ուժերի () հատկապես եկեղեցական-ծխական և հոգևոր դպրոցների նկատմամբ, որոնք ներկայումս գրեթե բացառապես, նաև քաղաքական առումով, գտնվում են Էջմիածնի կաթողիկոսության ազդեցության տակ:

2. Խիստ վերահսկողություն սահմանել գոյություն ունեցող բոլոր հայկական մասնավոր հաստատությունների նկատմամբ, ստուգել նրանց հիմնադրման հիմքերը և նպատակները:

3. Որպես կանոն ընդունել, որ ինձ վստահված երկրամասի հայերով բնակեցված տարածքներում հայերին չնշանակել ծառայության ընդհանրապես բոլոր վարչութ-

28 Մոսկվա քաղաքի Պատմության պետական արխիվ, Ք. Մոսկվա, նույն տեղում, թ. 24:

29 Նույն տեղում, թ. 33:

30 Ռուս մեծապետական շովինիստ, որին Երևանի քաղաքային այգում շառաչուն ապտակ էր հասցրել Թովմաս Միերյանը՝ «արմյաշկա» արտահայտությունը թույլ տալու համար:

յուններում:

Տեղական հայկական մամուլի գլխավոր օրգանը, այդ թվում «Պսակ» թերթը, արդեն ամիսուկես առաջ ենթարկվել է վարչական պատժի³¹:

ԹԻՎ 21

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆՉԱՅԻՆ ԺԱՆՊԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՇՈՒՅՈՒՆ

Իրականացվել է Քրեական կոդեքսի 246 հոդվածով նախատեսված հանցագործությունների երկու հետաքննություն և մեկ հետազոտություն՝ Թիֆլիսի Ռեալական ուսումնարանի աշակերտ Բարսեղ Զավարովի³² և Ալեքսանդրովյան ուսուցչական ինստիտուտի սովորող Վասիլի Շամրայի վերաբերյալ, որոնք մեղադրվում են հսկողության տակ գտնվող Ալեքսանդր Սեմյոնովի թաքցնելու և նրան դրամական օգնություն ցույց տալու մեջ՝ հանցավոր նպատակով Պետերբուրգ մեկնելու համար:

1. Սեմյոնով Ալեքսանդր, ազնվական, 1881 թ. ընդգրկվել է հետաքննության մեջ պետերբուրգյան բանվորների շրջանում հանցավոր պրոպագանդայի գործով և բարձրագույն կարգադրությամբ 1882 թ. մայիսի 13-ին ոստիկանության ուժեղացված հսկողության տակ հայտարարված վայրում երեք տարի ժամկետով դրվել է բացահայտ վերահսկողության տակ³³:

ԹԻՎ 22

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆՉԱՅԻՆ ԺԱՆՊԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՇՈՒՅՈՒՆ

...Բացի, քրեական կոդեքսի 246-248 հոդվածներով նախատեսված հանցագործությունների հետ կապված չորս հետաքննություններից, իրականացվել է երկու հետաքննություն այլ պետական հանցագործությունների վերաբերյալ, որոնց թվում է Զաքաթալա քաղաքում գողացված իրերի հայտնաբերման համար կատարված խուզարկության ժամանակ պատահաբար գտնված՝ «Հայ եղբայրներ և քույրեր»³⁴ հանցավոր բովանդակությամբ տպագիր պրոկլամացիայի հետ կապված հետաքննությունը:... Հետաքննության մեջ ներառվել են հայեր Գասպար Կարապետովը, Սիմոն Տեր-Զախարովը, Ալեքսանդր Զարինը և Գրիգոր Ստեփանովը:

Այլ հետաքննություն է առաջ եկել նշված պրոկլամացիան Ջևանշիրյան գավառում հայտնվելու հետ կապված, բայց նրանց տարածման մեջ մեղավորներ չհայտնաբերվեցին³⁵:

31 Ռուսաստանի պատմության պետական արխիվ, Սանկտ Պետերբուրգ), (Российский государственный исторический архив, Санкт Петербург), ф. 221, г. 2, қ. 1136. թ. 6-7:

32 Խոսքը Սիմոն Զավարյանի մասին է:

33 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մոսկվա), (Государственный архив Российской Федерации, г. Москва), ГАРФ, Ведомости к дознаниям, производившимся в жандармских управлениях Империи по государственным преступлениям, за время с 1-го января по 1-е июля 1884 года, по делам о государственных преступлениях. , л. 25.

34 Հայկական դպրոցների փակման հետ կապված՝ 1885 թ. սկզբներին Քր. Միքայելյանը Գ. Միրզոյանի հետ միասին գրել ու տարածել էր այս թռուցիկը, որի տեքստը պահվում է ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 53, թ. 3: Թե ինչպես էր այն հայտնվել Զաքաթալայում և Ղարաբաղի հյուսիսում՝ Ջևանշիրի գավառում, մինչ օրս անհայտ է մնում: Թերևս հետաքննության մեջ թվարկված անձանց ազգանունները թույլ կտան պարզել այդ հանելուկը:

35 ГАРФ, Ведомости к дознаниям, производившимся в жандармских управлениях Империи по государственным преступлениям, за время с 1-го января 1885 года по 1-е января 1886 года, по делам о государственных преступлениях, л. 39.

ԹԻՎ 23

Ունկնդիրներ Մարիա Այանակիի և Թամարա Աղամովայի մասին

N 1339
9 հունիսի 1883 թ.

Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պ-րն պետին

Ելնելով անհրաժեշտությունից, Ոստիկանության Դեպարտամենտը խոնարհաբար խնդրում է մանրամասն տեղեկություններ հայթայթել Թիֆլիսի վաճառականի դուստր, Ս.Պետերբուրգի Բեստուժկյան կուրսերի ներկայիս ունկնդիր Թամարա Աղամովայի նախորդ օրերի վարքագծի մասին, նշելով նրա ծանոթությունները, ազգակցական կապերը և քաղաքական բարեհուսությունը³⁶:

ԹԻՎ 24

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետ
21 հունիսի 1883 թ.
N 391

Ի պատասխան հունիսի 9-ի N 1339 գրության պատիվ ունեն տեղեկացնելու Ոստիկանության Դեպարտամենտին, որ Թիֆլիսի քաղաքացի Արտեմ Յակովլևիչի դուստր Թամարա Աղամովան ավարտել է Թիֆլիսյան իգական

գիմնազիայի կուրսերը և եղել է լավագույն աշակերտուհիներից մեկը: Նրա հայրը սկզբում չէր համաձայնվում նրան թողնել Ս Պետերբուրգ և միայն հետագայում զիջեց գիմնազիայի տնօրենի համառ խնդրանքներին, որը խորհուրդ էր տալիս պարոն Աղամովին իր դստերը հնարավորություն տալ ավարտել կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում, ուր և նա մեկնեց անցած 1882 թ. հոկտեմբեր ամսին:

Գտնվելով Թիֆլիսում Թամարա Աղամովան բացառապես շփվում էր գիմնազիստուհիների հետ, քաղաքական բարեհուսության տեսակետից աչքի չի ընկել:

Մտաւորապես այս հունիսի 10-ին Աղամովան եկավ Թիֆլիս և հանգրվանեց իր հոր տանը, իսկ այնուհետև արձակուրդների ավարտից հետո ստադիիր է կրկին մեկնել Պետերբուրգ կրթությունը շարունակելու համար:

Այն մասին, թե ինչպես կպահի իրեն Աղամովան Թիֆլիսում արձակուրդների ժամանակ, ես պատիվ կունենամ ժամանակին տեղեկացնելու Ոստիկանության Դեպարտամենտին:

Գնդապետ Պյակարսկի³⁷

ԹԻՎ 25

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետ
13 հուլիսի 1883 թ.
N 6,
ք. Թիֆլիս

Ոստիկանության Դեպարտամենտին

Որպես լրացում այս տարվա իմ հունիսի 21-ի N 391 գեկուցման, պատիվ ունեն զեկուցելու Ձերդ

Գերազանցությանը, որ Բեստուժկյան կուրսերի ունկնդիր, Թիֆլիսի քաղաքացու դուստր Թամարա Աղամովային հսկելու արդյունքում պարզվեց, որ նա բավականին ծայրահեղ ուղղվածության անձնավորություն է և հսկայական հեղինակություն ունի սովորող երիտասարդության շրջանում, այնպես որ, Թիֆլիսի հեղափոխական խմբակում ոչ հեռու ապագայում Թամարա Աղա-

36 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մոսկվա), ֆ.102, 3-րդ գործավարություն, ց. 1883 թ., գ. 294, թ. 3:

37 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մոսկվա), ֆ.102, 3-րդ գործավարություն, ց. 1883 թ., գ. 294, թ. 4:

նովային նախատեսվում է հատկացնել գլխավոր պրոպագանդիստի դերը իգական սեռի սովորող երիտասարդության շրջանում:

Ինչ վերաբերվում է Թիֆլիսում արդեն ձևավորված իմ կողմից նշված հեղափոխական խմբակին, ապա նրա ծրագիրը և նրանում մասնակցություն ունեցող անձանց ազգանունները ես պատիվ կունենամ անհապաղ զեկուցել Ձերդ Գերագանցությանը՝ ավելի ստույգ տեղեկություններ ստանալուց հետո:

Գնդապետ Պյակարսկի³⁸

ԹԻՎ 26

N 2087
10 օգոստոսի 1883 թ.

Ս. Պետերբուրգի պր-ն քաղաքապետին

Ոստիկանության Դեպարտամենտը տեղեկություններ ունի այն մասին, որ Բեստուժևյան կուրսերի ունկնդրուհի, Թիֆլիսի վաճառականի դուստր Թամարա Ադամովան, Ս. Պետերբուրգում գտնվելու ժամանակ կապեր է ունեցել կասկածելի անձնավորությունների հետ և արձակուրդները սկսվելուց հետո նա վերադարձել է հայրենիք, Թիֆլիս: Ադամովան նախաձեռնել է հիմնել կանացից կազմված խմբակ նրանց մեջ հեղափոխական ուսմունքներ տարածելու նպատակով:

Նկատի ունենալով Ադամովայի անկասկած վնասակար ուղղվածությունը և սովորող երիտասարդության վրա հանցավոր ազդեցությունը, Ադամովայի արձակուրդից վերադառնալուց հետո արգելել մնալ Ս. Պետերբուրգում և հետ ուղարկել նրան իր հայրենիք, Թիֆլիս³⁹:

ԹԻՎ 27

Թիֆլիսի նահանգային
ժանդարմական վարչության
պետ
28 օգոստոսի 1883 թ.
N 22

Ոստիկանության Դեպարտամենտի
պր-ն Տնօրենին

Այս օգոստոսի 25-ին իգական բարձրագույն կուրսերի ունկնդրուհի Թամարա Ադամովան ք. Թիֆլիս Թիֆլիսից մեկնեց Ս. Պետերբուրգ իր հետ

վերցնելով 12 տարեկան եղբորը: Թամարա Ադամովան, ինչպես ես արդեն զեկուցել եմ Ձերդ Գերագանցությանը, ամենաձայրահեղ ուղղվածության է, Թիֆլիսում հսկայական ազդեցություն է ունեցել սովորող երիտասարդության վրա՝ ինքնին հասկանալի է լիովին վնասակար, վերականգնել է ծանոթությունը քաղաքականապես անբարեհույս անձանց, հատկապես Սեմյոնովի հետ, որին հաճախ էր այցելում և նրա միջոցով ձգտում էր այլասերել երիտասարդությանը:

Սեմյոնովը հանձնարարել է Ադամովային Մոսկվայում փնտրել Միխայլովին, իսկ նրան չգտնելու դեպքում իմանալ, թե որտեղ է գտնվում և ինչով է զբաղվում:

Ես ենթադրում եմ, որ Թամարա Ադամովայի միջոցով կստեղծվեն Թիֆլիսի և նույնիսկ ամբողջ Անդրկովկասյան երկրամասի հարաբերությունները Պետերբուրգի հետ:

Գնդապետ Պյակարսկի⁴⁰

38 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մոսկվա), ֆ.102, 3-րդ գործավարություն, ց. 1883 թ., գ. 294, թ. 5:

39 Նույն տեղում, թ. 6:

40 Նույն տեղում, թ. 8-9:

ԹԻՎ 28

Թիֆլիսի նահանգային
ժանդարմական վարչության
պետ
28 սեպտեմբերի, 1883 թ.
N 21,
ք. Թիֆլիս

Ոստիկանության Դեպարտամենտի
պր. Տնօրենին

Անցած օգոստոս ամսի 25-ի N 12 իմ գեկույցից
Ձերդ Գերագանցությանը հայտնի է, որ
իզական բարձրագույն բարձր կուրսերի ունկնդիր
Թամարա Ադամովան այս օգոստոսի 25-ին Թիֆլիսից մեկնել է Ս Պետերբուրգ: Այ-
նուիանդերձ Ադամովայի ուղարկած նամակներից Թիֆլիսում պարզվում է, որ նա
մինչև հիմա ապրում է Մոսկվայում, բայց ինչ նպատակով, նա չի գրում:
Այս մասին տեղեկացնելով ձերդ Գերագանցությանը, պատիվ ունեմ գեկուցելու
տեղեկության համար, որ Ադամովայի հետ միասին մեկնել է նաև Թիֆլիսի իզական
գիմնազիայի կուրսերը ավարտած ուն Ռազունովսկայա, որին մտադիր են դարձնել
հեղափոխական և այդ խնդիրը հանձնարարում են իր համակուրսեցի Դորլամանին:

Գնդապետ Պյակարսկի⁴¹

ԹԻՎ 29

10 սեպտեմբերի, 1883 թ.
N 2666

Ոստկանության Դեպարտամենտի 3-րդ բաժանմունքը
պատիվ ունի խոնարհաբար խնդրելու Ձերդ
Բարեձնություն Ալեքսեյ Սպիրիդոնովիչին,

բացարձակապես գաղտնի ձևով հաղորդել տեղեկություններ Մոսկվայում բնակվող
Թիֆլիսի քաղաքացու դուստր, Բեստուժևյան կուրսերի ունկնդրուհի Թամարա Ադա-
մովի կապերի, զբաղմունքի տեսակների և ծանոթների շրջանակի վերաբերյալ,
ինչպես նաև այն մասին, թե նա ժամանակավոր է մնացել Մոսկվայում, թե մտադիր
է ավելի երկար ժամանակով հաստատվել և դրանում մերժել նրան:

Խնդրում ենք տեղեկացնել⁴²:

ԹԻՎ 30

18 հոկտեմբեր 83 թ.(20 հոկտեմբերի 1883 թ.)

Պատիվ ունեմ տեղեկացնելու, որ Թամարա Արտեմի Ադամովան Մոսկվա է ժա-
մանել այս ակադեմիական տարվա սկզբին և դա հայտնի է դարձել պահնորդական
բաժանմունքին Պետրովսկի Ակադեմիայի ուսանող Ներսեսովին⁴³ հետևելու արդ-
յունքում, որի հետ նա ապրում է նույն բնակարանում: Ներսեսովը պատկանում է
«Նարոդնայա վոյային», ամենասերտ գործնական հարաբերությունների մեջ էր
ձերբակալվածներ Պուշկինի և Կորեյինի հետ և բացի դրանից վարում է հայկական
խմբակի գործը, որի համար ցանկանում է կազմակերպել տպարան: Անկասկած
Ադամովան նրա հետ նույն համոզմունքներն ունի, բայց եթե նույնիսկ նա անմեղ
լինի հեղափոխական առումով, ապա Ներսեսովը նրան կվերաքարոզի: Ներսեսովը
այժմ նոր բնակարան է վարձել ...Բուլանովի նրբանցքում և գնում է կահույք, որից
եզրակացնում ենք, որ նա Ադամովային հրաժեշտ չի տա:

41 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մոսկվա), ֆ.102, 3-րդ գործավարություն, ց. 1883 թ., գ. 294, թ. 10:
42 Նույն տեղում, թ.11:
43 Դավիթ Ներսիսյան. Թամարա Ադամյանի գաղափարակից ընկերը, իսկ հետագայում՝ ամուսինը:

31 հոկտեմբերի, 1883 թ.
N 2935

գաղտնի

Ողորմած Տեր
իշխան Միխայիլ Անդրեևիչ

Ոստիկանության Դեպարտամենտը տեղեկություններ ունի, որ Բեստուժկյան կուրսերի ունկնդրուհի, Թիֆլիսի վաճառականի դուստր Թամարա Ադամովան Ս Պետերբուրգում իր գտնվելու ժամանակ կապեր է ունեցել քաղաքան անբարեհուսությամբ աչքի ընկած անձնավորությունների հետ, իսկ ուսանողական արձակուրդների ժամանակ մեկնել է հայրենի Թիֆլիս՝ ձեռնամուխ լինելով տեղի սովորող երիտասարդության շրջանում խմբակներ ձևավորելուն՝ սոցիալ-հեղափոխական տեսություններ տարածելու նպատակով: Նկատի ունենալով Ադամովայի վնասակար ուղղվածությունը և Ս Պետերբուրգում սովորող երիտասարդության վրա նրա հսկայական ազդեցությունը, անհրաժեշտ եմ համարում կարգադրել արձակուրդներից վերադառնալուց հետո նրան վտարել հայրենիք⁴⁵:

ԹԻՎ 32

Մոսկվայի
գեներալ-նահանգապետ

(12 նոյեմբերի, 1883 թ.)
Ողորմած տեր Պյոտր Վասիլևիչ

Ի պատասխան հոկտեմբերի 31-ի N 2933 նամակի, պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ գերագանցությանը, որ Մոսկվայում բնակվող Թիֆլիսի վաճառականի դուստր Թամարա Ադամովան, նկատի առնելով հետաքննությամբ ստուգված նամակներից նրա քաղաքական ուղղվածության մասին տեղեկատվությունը, թեպետև ենթակա է նշված մայրաքաղաքից վտարման, բայց ներկա պահին ես անհրաժեշտ եմ գտնում արգելել նրա նկատմամբ այդ միջոցի կիրառումը հետևյալ նկատառումներով: Ադամովան, ինչպես հայտնի է պահնորդական բաժանմունքին, Մոսկվայում բնակվում է Պետրովսկի Ակադեմիայի ուսանող Ներսեսովի հետ, որի նկատմամբ ուշադիր հսկողություն է սահմանված: Գաղտնի տեղեկություններով Հարավից սպասվում է տպագրական շրիֆտի առաքումը Մոսկվա, որում անկասկած մասնակցություն ունի Ներսեսովը և այդպիսով տեղական ռոտիկանությունը հնարավորություն կունենա այն հայտնաբերել: Եթե Ադամովան հեռացվի նախատեսված ժամկետից շուտ, ապա Ներսեսովը, որը ներկայումս չի կասկածում իր նկատմամբ տարվող հսկողության մասին, կարող է իրեն համարել բացահայտված և բնականաբար իրեն հեռացնել շրիֆտի առաքման գործից, որը կարող է ընկնել հեղափոխական կուսակցության ձեռքը: Կասեցնելով Մոսկվայից Ադամովայի հեռացումը, ես պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ Գերագանցությանը իմ վերոշարադրյալ նկատառումների (թ. 16) մասին, խոնարհաբար խնդրում եմ Ձեզ, Ողորմած Տեր, ինձ տեղեկացնել այն ցուցումների մասին, որոնք դուք անհրաժեշտ կհամարեք տալ կապված իմ ներկայացրած պատճառաբանությունների հետ:

Ընդունեք, Ողորմած Տեր, իմ հարգանքները և հավատարմությունը:
Իշխան Դովգորուկով⁴⁶:

44 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մոսկվա), ֆ.102, 3-րդ գործավարություն, ց. 1883 թ., գ. 294, թ. 12:
45 Նույն տեղում, թ. 13:
46 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մոսկվա), ֆ.102, 3-րդ գործավարություն, ց. 1883 թ., գ. 294, թ. 15-16:

Ժ (ՃԶ) քաղթ. թիվ 3 (63), հայխ-սեպտեմբեր, 2018

ՎԿՎ համահայկական հանդես

ԹԻՎ 33

Ոստիկանության Դեպարտամենտի պր-ն Տնօրենին

Ն.Գ.Ն.

Մոսկվայի

օբեր-պօլիցեյմեյստեր

Մոսկվայի գեներալ-նահանգապետի 1883 թվականի նոյեմբերի 5-ի N 2111 առաջարկին ի պատասխան՝

կապված Թիֆլիսի վաճառականի դուստր Թամարա Ադամովային Մոսկվայից իր հայրենիք՝ Թիֆլիս վտարելու մասին, ով ներկայումս անունացել է Պետրովսկի հողագործական անտառային ակադեմիայի ուսանող Դավիթ Մովսեսի Ներսեսովի հետ, միջնորդում են Ձերդ Պայծառափայլության մոտ կասեցնելու այդ վտարումը:

Այս կասեցման պատճառը նրանում է, որ Ներսեսովի նկատմամբ ներկայումս հաստատված է խիստ ուշադիր հսկողություն, որը գործակալների տեղեկություններով՝ կարող է բերել լուրջ արդյունքների: Մոսկվայից Ներսեսովի կնոջ վտարումը անհրաժեշտ ժամկետից շուտ, կվնասի գործին, քանի որ Ներսեսովը, չկասկածելով իր նկատմամբ տարվող հսկողության մասին, դրանից հետո իրեն անպայման կհամարի բացահայտված և բնականաբար իր մասնակցությունը կբացառի տպագրական շրիֆտի տեղափոխման գործից, որը Մոսկվայում սպասում են Հարավից;

Այսպիսի իրավիճակում շատ հնարավոր է, որ շրիֆտը ընկնի հեղափոխական կուսակցության ձեռքը: Հաղորդելով այդ մասին Ձերդ Գերագանցությանը, պատիվ ունեն խոնարհաբար խնդրելու Ձեզ թույլ կտանք արդյոք տեղյակ պահել Մոսկվայի պր-ն Գեներալ-նահանգապետին Մոսկվայից Ներսեսովի կնոջը չվտարելու իմ միջնորդության լուրջ շարժառիթների մասին⁴⁷:

ԹԻՎ 34

Տիտ. խորհրդակ. որդի Ալեքսանդր Մեմյոնովի⁴⁸ մասին

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետ

20 հուլիսի 1883 թ.

ք. Թիֆլիս

Ընթացիկ 1883 թվականի մարտ ամսից

Թիֆլիսում բնակվող Ալեքսանդր Մեմյոնովը գտնվում է ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ: Մեմյոնովն ընդգրկված է Պետերբուրգի

բանվորների շրջանում հեղափոխական պրոպագանդա տանելու գործի մեջ, 1882 թ. մայիսի 12-ից թույլատրված է վարչական կարգով, որպեսզի Մեմյոնովը ենթարկվի ոստիկանության բացահայտ վերահսկողությանը երեք տարի ժամկետով (1881 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 1-ի Տեսություն):

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության դիտարկումներով հաստատվել է, որ Թիֆլիսում ներկայումս Մեմյոնովը շարունակում է իր հանցավոր գործունեությունը, ձգտում է հարաբերություններ ստեղծել քաղաքական անբարեհույսների և միաժամանակ՝ վտանգավոր անձանց հետ, որոնք նրա կարծիքով կարող են օգտակար լինել հանցավոր գործունեության համար:

Մեմյոնովը երազում է Թիֆլիսում կազմակերպել գաղտնի տպարան, կեղծել փաստաթղթեր, հիմնել դինամիտի և պայթուցիկ ռումբերի արտադրամաս, այսինքն՝ իրեն ներկայացնել որպես մի անձնավորության, որը պատկանում է ահաբեկիչների կուսակցությանը:

47 Նույն տեղում, թ. 18:

48 Սա կենտրոնից եկած և մեծապետական տրամադրություններով համակված այն նույն **Ալեքսանդր Մեմյոնովն** է, որի Թիֆլիսի ծայրամասում՝ Օրթաձալայում, արտասանած հայտնի խոսքերը՝ «ուս ազգի պատմական առաքելությունն է ի մի ձուլելու փոքր ազգերը» առաջ բերեցին հայ և վրացի նարոդնիկների բուռն ընդդիմությունը: Արդյունքում՝ Թիֆլիսի բազմազգ ու միասնական նարոդնիկական կազմակերպությունը պառակտվեց և այնուհետև մտքերի մեջ տիրական դարձավ նոր նշանաբանը՝ «հեղափոխություն հայկական հողի վրա»: Ավելի մանրամասն տես **Խուդինյան Գ.**, ՀՅ Դաշնակցության բնական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 105:

Սեմյոնովի կարծիքով տեղաբնիկները հանցավոր գործունեության համար իրենց հայրենիքում պիտանի չեն, նրանց հարկավոր է ուղարկել կայսրության ներքին նահանգները, որտեղ նրանք կտվորեն կարգապահություն և զգուշություն և այլ ավելի մեծ ստորություններ և միայն դրանից հետո նրանք պիտանի կլինեն հայրենիքում: Անհրաժեշտ է Թիֆլիս հրավիրել փորձված հեղափոխականների, հատկապես որ նրանց այստեղ, քան որևէ այլ տեղ, հարմար է խուսափել հետապնդումներից և լիովին ազատ շարունակել իրենց գործունեությունը: Սեմյոնովի վերջին կարծիքը լիովին արդարացի է:

Իմիջիայլոց, Սեմյոնովը ձգտում է թափանցել բանվորական շրջաններ, նրանց մեջ քարոզչություն տանելու նպատակով, սակայն առայժմ նրան դրանից հեռու է պահում հայտնի Իվանովը, որը իր սրբազան պարտքն է համարում բացառել հանցավոր քարոզչությունը բանվորների շրջանում⁴⁹: Խոսելով բանվորների մասին, ես տեղին եմ համարում գեկուցել, որ Թիֆլիս՝ Կայսրության ներքին նահանգներից եկած բանվորական մասսա կա, նրա մեծ մասը զարգացած է և նրանք ուշադիր հետևում են Կայսրությունում առկա քաղաքական տրամադրություններին, թերթերի այն համարներին, որոնք հիշատակություններ ունեն քաղաքական պրոցեսների մասին:

Սեմյոնովը սերտ հարաբերությունների մեջ է Ելիսեյ Միխայլովի հետ (հունիսի 11-ի N 323 և 369 գեկույցներ), որի մասին նա շատ բարձր կարծիք ունի, այդ կարծիքը բաժանում է նաև հայտնի Իվանովը. այս վերջինիս խոսքերով Միխայլովից կպատրաստվի այնպիսի գործիչ, որոնք այստեղ մեծ դեր են խաղում ռուս հեղափոխականների շրջանում:

Նեկայումս, Սեմյոնովը տեսնելով, որ Ելիսեյ Միխայլովի գործը, որի համար ինքը մեկնել էր Մոսկվա, չգիտես ինչու խափանվել է, նրան նամակ է գրել, որպեսզի նա գա Թիֆլիս և որպեսզի անգործության մեջ չհայտնվի (թ. 3), զբաղվի հեղափոխական խմբակի կազմավորմամբ, որի մեջ ըստ Սեմյոնովի՝ որպես գլխավոր գործչի, խոսքերի, ի միջիայլոց պետք է մտնեն կանացի բարձրագույն կուրսերի ունկնդրուհի Թամարա Ադամովան, Թիֆլիսի դասական գիմնազիայի 3-րդ կուրսի գիմնազիստ Բեհրուջովը, Թիֆլիսի վարչության ծառայող Գոգոբերիձեն⁵⁰, Անդրկովկասի երկաթուղային ճանապարհների վարչության ծառայող Կուդրյավցեվը, հայտնի Իվանովը, և հնարավոր է ոստիկանության գաղտնի հսկողության տակ գտնվող, Պետերբուրգի համալսարանից հեռացված Մելիք-Ալավերդովը և տեխնիկական ուսումնարանի ուսուցիչ Դաստակովը⁵¹:

Այս խմբակում գործունեության դերերը նախատեսված է այսպես բաժանել: Թամարա Ադամովան քարոզչություն պետք է տանի երիտասարդ կանանց շրջանում, Բեհրուջովը՝ սովորող երիտասարդության շրջանում, Գոգոբերիձեն՝ տարբեր մասնավոր հաստատությունների ունկնդիրների և ուսանողների շրջանում, Կուդրյավցեվը⁵²՝ երկաթուղային ճանապարհների ծառայողների շրջանում, Իվանովը՝ բանվորների շրջանում: Սեմյոնովը մոտ օրերս կգրի խմբակի ծրագիրը, իսկ այնուհետև նախատեսվում է սկսել հավաքները: Ի միջիայլոց Սեմյոնովը լավ է տիրապետում գրչին և հողվածներ է տեղադրում տեղական թերթերում:

Պատիվ ունեմ վերը ներկայացվածը հաղորդել Ձերդ Գերազանցությանը:

49 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մոսկվա), ֆ.102, 3-րդ գործավարություն, ց. 1883 թ., գ. 688, թ. 1:

50 Գոգոբերիձեն մտերիմ է քաղաքականապես անբարեհույս անձանց հետ. Միխայլովից ստացել է հանցավոր բովանդակության բրոշյուրներ, որոնք տարածում է իր ծանոթների շրջանում:

51 **Աբրահամ Դաստակյան**-1880-ականների նարոդնիկական և ազգային-նարոդնիկական կազմակերպությունների ակտիվ գործիչ: 1890-ին ՀՅ Դաշնակցության առաջին Կենտրոնի կամ Կենտրոնական վարչության անդամ: Մինչ օրս մեր պատմագիտության անհայտ մնացած այս ուշագրավ գործչի մասին փաստաթղթերի հարուստ փաթեթը, որը կազմում է ներկա հրապարակման երկրորդ մասը, լույս է տեսնելու «Վէմ»-ի հաջորդ համարում:

52 Կուդրյավցեվից տեղեկություններ են ստացվել Պոմորցևի մասին, որի հետ ինքը ծանոթ է մանկությունից և նրա հետ երկար ժամանակ սովորել և բնակվել է Սարատովում:

ԹԻՎ 35

Տեղեկանք – Թիֆլիսի 1-ին գիլդիայի վաճառականի դուստր, Բեստուժևյան կուրսերի ունկնդրուհի Թամարա Արտեմի Ադամովա: Ավարտել է Թիֆլիսի իգական գիմնազիայի կուրսերը և ներկայումս արձակուրդները անց է կացնում Թիֆլիսում: Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետի տվյալներով, Ադամովան աչքի է ընկնում ծայրահեղ ուղղվածությամբ և տեղի սովորող երիտասարդության շրջանում մեծ հեղինակություն ունի (թ. 9), և հավանաբար նրան կարևոր դեր է վերապահված Թիֆլիսի իբր ձևավորված հեղափոխական խմբակում: Աշնանը Ադամովան մտադիր է վերադառնալ Ս. Պետերբուրգ:

ԹԻՎ 36

Տեղեկանք – Մելիք-Ալավերդով Ալեքսանդր – Պետերբուրգի համալսարանի նախկին ուսանող, 1882 թ. նոյեմբերի 10-ին մասնակցել է նշված համալսարանում տեղի ունեցած անկարգություններին և դրա համար էլ ի թիվս մյուսների, ձերբակալվել և պահվել Ալեքսանդրո-Նևսկյան մասի ոստիկանական տեղամասում: Այնուհետև Համալսարանական դատարանի որոշմամբ, վտարվելով Պետերբուրգի համալսարանից, Ալավերդովը մեկնել է հայրենիք, Թիֆլիս, որտեղ նրա նկատմամբ հաստատվել է ոչ բացահայտ հսկողություն:

1883 թ. օգոստոս⁵⁴:

Սկրտիչ Դ. Դանիելյան – զբաղվում է 1870–1880-ական թվականների նարոդնիկական շարժման, հայ ազգային նարոդնիկության և ազգային կուսակցությունների պատմության հիմնահարցերով:

Summary

THE ORGANIZATIONS OF ARMENIAN NARODNIKS AND NATIONAL-NARODNIKS IN 1880–1890S

Part one: New found ratifications on the activity of “The Union of the Patriots”

Mkrtich D. Danielyan

Key words – Armenian narodniks; national narodnik organization; Police Department; «The Union of Patriots»; ARF Dashnaksutyun; archive ratifications; Karapet Ter-Khachatryan; leaflet; letter–article; Davit Nersisyan; Tamara Adamyan.

The best representatives of East Armenian youth have actively participated in the heroic and sacrificing struggle of 1870–1880s of Russian narodnikism against the despotism of tsarist Russia by initially joining narodnik then Armenian national-narodnik organizations and groupings. At the crucial moment of transition

53 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Մխսկվա), ֆ.102, 3-րդ գործավարություն, ց. 1883 թ., գ. 688, թթ. 2–4:

54 Նույն տեղում, թ. 8–9:

from the political goals of narodnikism to the issues of Armenian national-liberation movement the best representatives of East Armenian youth in 1882 founded in Moscow the organization of “The Union of Patriots” which in its embryo soon revealed the ideology and main peculiarities of the activity of newly formed organizations and particularly of ARF Dashnaktsutyun.

But since this organization, founded in Moscow and subsequently united with the Armenian national-narodnik grouping of Tiflis, has been distinguished by the secretive practices typical for underground structures, the vast majority of the ratifications referring to its history has remained secret for the scientific circles. They are mainly preserved in the Central History State Archive in Moscow, in the State Archive of Russian Federation (Moscow), in the Archive of Russian Foreign Ministry (now the archive of foreign ministry of Russian Empire, Moscow) and in the State Archive of Russia (Saint Petersburg). The first flying sheet of the “Union of the Patriots” entitled “An Invitation for the Armenian Youth” (April, 1882) which the organization has managed to copy with the use of hectograph machines and spread among the youth, the letter-article “The Response of the Former Student to his Fellow-Student”, as well as, the materials on investigations carried out by tsarist Police Department about the revolutionary underground activities of Karapet-Ter-Khachatryan, Davit Nersisyan, Tamara Adamyan and other figures are especially noticeable.

Резюме

АРМЯНСКИЕ НАРОДНИКИ И НАЦИОНАЛЬНО-НАРОДНИЧЕСКИЕ ОРГАНИЗАЦИИ 1880-1890-ЫХ ГГ.

Часть первая. Новообнаруженные документы о деятельности «Союза патриотов»

Мкртич Д. Даниелян

Ключевые слова – армянские народники, национально-народническая организация, Департамент Полиции, «Союз патриотов», АРФ Дашнакцутюн, архивные документы, Карапет Тер-Хачатрян, листовка, письмо-статья, Давид Нерсисян, Тамара Адамян.

В героической и изобилующей жертвами борьбе русского революционного народничества против царской тирании в 1870-1880 гг. сначала в составе народнических, а затем – национально-народнических организаций и кружков активно участвовали лучшие представители восточно-армянской молодежи. В переломный момент перехода от политических целей русского революционного народничества к задачам армянского национально-освободительного движения, в 1882 году, лучшие представители восточно-армянской молодежи основали в Москве организацию «Союз патриотов», которая в зачаточном состоянии проявила основные особенности идеологии

и образа действий образованных чуть позже армянских национальных партий, в особенности – АРФ Дашнакцутюн.

Однако, так как эта организация, основанная в Москве, а впоследствии объединенная с тифлисским армянским национально-народническим кружком, отличалась секретностью действий, присущей подпольным структурам, большая часть документов ее истории так и осталась неизвестной научной общественности. Они в основном хранятся в Центральном государственном архиве города Москвы, Государственном архиве Российской Федерации (Москва), Архиве внешней политики России (ныне – Архив внешней политики Российской Империи, Москва), Российском государственном историческом архиве (Санкт-Петербург). Особо примечательны первая листовка «Союза патриотов» – «Призыв к армянской молодежи» (апрель 1882 г.), которую организация сумела размножить на гектографе и распространить в среде молодежи, письмо-статья «Ответ бывшему студенту от его друга-студента», а также материалы следствий, проведенных Департаментом Полиции о подпольной революционной деятельности Карапета Тер-Хачатряна, Давида Нерсисяна, Тамары Адамян и других деятелей.